ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻՑ

ՉԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ N 34 2023

ԸՆԴԵՐՔԻՑ

ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ 2023

◊ ԿԱՅՈՒՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՉԵԿՈՒՅՑԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

◊ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ

◊ ԷՆԵՐԳԵՏԻԿՆԵՐԻ ՏՈՆԸ

◊ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՔԻՄԻԿԸ

◊ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ

◊ ՄԻԱՎՈՐՎԵԼ ԵՆ ՀԱՆՈՒՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ

ZANGEZUR ՊՂՆՁԱՄՈԼԻՐ ԱՐԺԵՔՆԵՐ

«ԶՊՄԿ» ՓԲԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԻՐՏՆ Է, ԵՎ ՄԵՐ ՊԱՐՏՔՆ Է ԱՊԱՀՈՎԵԼ ԴՐԱ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ



ԶՊՄԿ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլի

Հարգելի գործընկերներ, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը տարին ավարտում է լավ ցուցանիշներով՝ մնալով երկրի տնտեսության հիմնասյուներից մեկը, ամենախոշոր հարկատուն: Մեր տարեվերջյան կարևոր իրադարձություններից մեկը ԶՊՄԿ կայուն զարգացման առաջին զեկույցի հրապարակումն էր, որն ընկերության շարունակական աճող հեղինակության լավագույն վկայություններից է:

Բնապահպանական և սոցիալական կառավարումը, առողջությունն ու անվտանգությունը, հաշվետվողականությունը և թափանցիկությունը պարզապես նորաձևություն չեն հանքարդյունաբերության ոլորտում: Սա աշխատաոճ է բոլոր այն ընկերությունների համար, որոնք ցանկանում են ապագա ունենալ այսօրվա արդյունաբերության մեջ, շահել իրենց համայնքների վստահությունն ու աջակցությունը և ձգտում՝ կայուն զարգացման: Սա կդառնա ԶՊՄԿ-ի աշխատանքի մեթոդը գալիք տարիների ընթացքում:

Շնորհակալություն եմ հայտնում մեր բոլոր աշխատակիցներին, ովքեր ամեն օր նպաստում են անվտանգ և կայուն աշխատանքի ապահովմանը: Միշտ բարելավվելու տեղ կա, և ես ուզում եմ, որ բոլորս կարողանանք հպարտանալ նրանով, որ ամեն տարի մենք առաջընթաց ենք գրանցում:

«ԶՊՄԿ» ՓԲ ընկերությունը Հայաստանի տնտեսության սիրտն է: Եվ մեր պարտքն է ապահովել դրա առողջությունը՝ բոլոր ոլորտներում: Ժամանակակից հանքարդյունաբերությունում չկա զիջումների տեղ շրջակա միջավայրի կառավարման, սոցիալական արդարության, բոլորի համար արժանապատիվ աշխատատեղերի, թափանցիկության և հաշվետվողականության հարցերում:

Վստահ եմ, որ գալիք 2023 թվականը կլինի նոր հաջողությունների և ձեռքբերումների տարի բոլորիս համար:

ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐՈՎ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՆՊԱՍՏԵԼ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆԸ

Ամփոփելով անցնող տարին՝ հպարտությամբ կարող ենք փաստել, որ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի Քաջարան և Կապան համայնքներում 2022 թվականին իրականացված սոցիալական ներդրումների ծրագրերը կազմել են մոտ 3,5 միլիարդ ՀՀ դրամ:

Մի քանի թվային փվյալներով ամփոփենք. այսպես՝ Կապան խոշորացված համայնքում իրականացվել է ավելի քան 1 միլիարդ 919 միլիոն ՀՀ դրամի ներդրում, այդ թվում՝ ենթակառուցվածքների զարգացման, շինարարական սոցիալական, առողջապահական և այլ ծրագրերում:



ԶՊՄԿ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյան

Ավելի քան 1,5 միլիարդ դրամի ներդրումներ իրականացվել են կրթության և զարգացման, սպորտի, մշակույթի, ինչպես նաև սոցիալական աջակցության ամենատարբեր ծրագրերում:

Քաջարան խոշորացված համայնքում իրականացվել է ավելի քան 1 միլիարդ 514 միլիոն դրամի ներդրում, որից ավելի քան 900 միլիոնը՝ ենթակառուցվածքների զարգացման, շինարարական սոցիալական և այլ ծրագրերում: Մոտ 600 միլիոն դրամ հատկացվել է սոցիալական աջակցության, կրթական, մշակույթի և սպորտի զարգացման ծրագրերում:

Եվ չնայած տարին բավականին բարդ էր, և դժվար է մեզ համար այն գոհունակությամբ ամփոփելը, քանի որ բոլորիս մտահոգող խնդիրները շատ են, բայց կարող ենք գոհանալ այն հանգամանքով, որ հաջողվել է լավագույնս օգտագործել հնարավորությունները, լինել ամենախոշոր հարկատուն, համալրել երկրի բյուջեն, ստեղծել աշխատատեղեր, ապահովել արժանապատիվ վարձատրություն մեր աշխատակիցների համար, աշխատանքի անվտանգ պայմաններ, աջակցել թե՛ մեր աշխատակիցներին, թե՛ համայնքին և թե՛ պատերազմի ու շրջափակման հետևանքով տուժած ընտանիքներին: Մենք այսպես կարող ենք նպաստել խնդիրների լուծմանը:

Կցանկանայի, որ 2023 թվա- կանն ավարտեինք ավելի մեծ ձեռքբերումներով և իհարկե՝ բարձր տրամադրությամբ:

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈՒԺԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ...

Կոնֆերանս՝ նվիրված ՋՊՄԿ-ի 70-ամյակին: Ընկերության կայուն զարգացման առաջին զեկույցի ներկայացումը



Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում (ՀԱՊՀ) կազմակերպվել էր կոնֆերանս՝ նվիրված Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի 70-ամյակին, որի ընթացքում ներկայացվեց ընկերության կայուն զարգացման առաջին զեկույցը:

ՋՊՄԿ գլխավոր տնօրեն, Գեոպրոմայնինգ ընկերությունների խմբի նախագահ Ռոման Խուդոլին ընկերության կայուն զարգացման առաջին զեկույցի հրապարակման առթիվ շնորհավորեց ՋՊՄԿ-ի թիմին և կայուն զարգացման գծով տնօրենին:

«Առաջին զեկույցի հրապարակումը ոչ միայն Հայաստանում, այլ տարածաշրջանում առաջատար ընկերություն դառնալուն ուղղված առաջին քայլն է՝արդիականացման առումով: Երբ հաջորդ տարի կհրապարակենք հերթական զեկույցը, որպես ընկերություն և թիմ կկարողանանք հպարտանալ կայուն զարգացման մեր բոլոր ցուցանիշներով: Սա մեր նպատակն է: Նման քննարկումները շատ կարևոր են, քանի որ դրանց ընթացքում բարձրացվում են կարևոր հարցեր, վերհանվում ոլորտային խնդիրներ:

Կարևոր ցուցանիշներ

Հանքարդյունաբերությունը պետք է մշտապես լինի պետության, մասնագետների և հասարակության ուշադրության կենտրոնում: Որպես հանքարդյունահանող ընկերություն՝ միջինը ապահովում ենք Հայաստանի արտահանման ընդհանուր ծավալի 40 տոկոսը: Ընթացիկ տարվա առաջին ինը ամսվա տվյալներով՝ ոլորտն ապահովել է բյուջեի մուտքերի 20 տոկոսը: Այս տարի այդ ցուցանիշը ռեկորդային է՝ անցած ինը ամսվա ընթացքում պետբյուջե ենք վճարել 130 մլրդ ՀՀ դրամ: Մինչև տարվա վերջ ակնկալում ենք թիվը հասցնել 150 մլրդ ՀՀ դրամի: Կարևորում ենք աշխատատեղերի պահպանումը և ստեղծումը, աշխատակիցների անվտանգության պայմանների բարելավումը, բարեգործական ծրագրերը և այլն», - նշեց Ռոման Խուդոլին:



Պատասխանատու հանքարդյունաբերություն

«Ոլորտը Հայաստանում զարգանալու մեծ հեռանկարներ ունի:Հանքարդյունաբերությանը պետք է ամենայն պատասխանատվությամբ մոտենալ: Մեր առջև խնդիր ենք դրել հետևել միջազգային լավագույն պրակտիկային: Վերջին տասնամյակում աշխարհը սկսել է ավելի լավ հասկանալ, թե ինչպես պետք է պատասխանատու կերպով կառավարել ոլորտը՝ մեծ ուշադրություն դարձնելով կայուն զարգացմանը: Զգալիորեն կատարելագործվել են էկոլոգիական և սոցիալական խնդիրների լուծման մեթոդները, ինչպես նաև անվտանգության խնդիրները»,- հավելեց ԶՊՄԿ գլխավոր տնօրենը:



ԶՊՄԿ կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանը ներկայացրեց կոմբինատի կայուն զարգացման առաջին զեկույցը՝ վստահություն հայտնելով, որ այն լինելու է ամենամյա, և սա լավագույն վկայությունն է թափանցիկ և հաշվետու աշխատելաոճի:

Կոնֆերանսի ընթացքում տեղի ունեցավ երկու պանելային քննարկում՝ «Հանքարդյունաբերություն. կայուն զարգացում և արդիականացում» և «ՀՀ հանքարդյունաբերության ներդրումային հնարավորությունները» թեմաներով:



ԱԺ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Բաբկեն Թունյան.

«Հայաստանի համար հանքարդյունաբերության ոլորտն անհրաժեշտություն է, բայց պետք է լինի պատասխանատու հանքարդյունաբերություն: Ընդերքը պետք է այնպես շահագործել, որ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազագույնի հասցվի: Ընդերքը պատկանում է ժողովրդին և նրա հարստությունը պետք է նպաստի երկրի բարգավաճմանը, հնարավորինս արդարացիորեն վերաբաշխվի հասարակության մեջ»:

ՋՊՄԿ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյան.

«Կառավարության կողմից այն մոտեցումները, որոնք եղել են մի քանի տարի առաջ մեր ոլորտի հանդեպ, կտրականապես փոխվել են, այժմ տեսնում ենք լրիվ ուրիշ մոտեցում: Շնորհակալ ենք կառավարության, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մեր գործընկերներին: Տեսնում ենք նրանց աշխատանքը և այն դրական փոփոխությունները, որոնք արդեն տրամիս են սպասված արդյունքներ: Մեր բարձրացրած հարցերը չեն անտեսվում. քննարկումներ են կազմակերպվում, և հիմնականում խնդիրները դրական լուծում են ստանում, ինչը նպաստում է երկրի տնտեսության զարգացմանը և առաջընթացին»:

ՋՊՄԿ կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյան.

«Կարող ենք ունենալ նպատակներ, բայց չունենալ համապատասխան ռեսուրսներ դրանց հասնելու համար:Կարող ենք նաև ֆինանսական մեծ հնարավորություններ ունենալ, սակայն առավել կարևոր է ոլորտի ճիշտ հասցեագրումը և խնդիրներին թիրախային լուծումներ տալու կարողությունը: Պետք է այնպես շահագործենք մեր ռեսուրսները, որ ապագա սերունդներին ապրելու համար բարենպաստ միջավայր թողնենք: Կայուն զարգացման ամբողջ ռազմավարությունն է՝ շրկել կոմբինատում առկա խնդիրները և կատարելագործել կայուն զարգացմանն առնչվող ոլորտները՝ առաջնահերթությունը տալով բնապահպանությանը և աշխատանքի անվտանգությանը»:

Կայուն զարգացման և բնապահպանական ծրագրերի պատասխանատու, տ.գ.թ., դոցենտ Հայկ Ակարմազյան.

«Այսօր խնդիր ունենք հանքարդյունաբերությունն ավելի պատասխանատու դարձնելու: Ուրախ եմ, որ ՋՊՄԿ-ի նման խոշոր ընկերությունը հրապարակային կերպով հայտարարում է, իր հավատարմությունը պատասխանատու հանքարդյունաբերության սկզբունքներին, որի ապացույցն է տարեկան զեկույցը»:



- 2021 թվականից կառավարությունը վարում է հանքարդյունաբերությունում հարկային բեռի ավելացման քաղաքականություն: Ինչ հետևանքներ կարող է սա ունենալ:

- Վերջին մեկ տարվա ընթացքում մի քանի անգամ տեղի է ունեցել հարկային բեռի փոփոխություն, ոլորտն ինչ-որ չափով սթրեսի է ենթարկվել: Այս տարի ռոյալթիի հաշվարկման նոր մեխանիզմի որոշում ունեցանք, դրա հետ կապված մոտակա տարիներին փոփոխություն չենք ունենա և ոլորտն իր ծախսերն ու ռիսկերը կկարողանա ճիշտ կառավարել:



ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Հովհաննես Հարությունյան

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը Հայաստանի խոշորագույն հարկատուն է

Այս տարվա առաջին ինը ամսվա տվյալներով՝ ԶՊՄԿ-ը Հայաստանի խոշորագույն հարկատուն է՝ կոմբինատը 130 մլրդ դրամի չափով հարկեր է վճարել: Վարդան Ջհանյանի խոսքով՝ դրամի արժևորմամբ պայմանավորված ոլորտը մտնում է ճգնաժամային ժամանակաշրջան:

«Հարկային ոլորտում անկանխատեսելիությունը երկու բացասական կողմ ունի: Առաջին՝ ռիսկերի բարձրացում , երկրորդ՝ երբ չես կարողանում կանխատեսել, թե ինչ չափի հարկեր ես վճարելու, ներդրողը չգիտի, թե ներդրումային ինչպիսի որոշում պետք է կայացնի», - նշեց ԶՊՄԿ գլխավոր տնօրենի առաջին տեղակալը:

Կոնֆերանսն ամփոփվեց հետևյալ հիմնական եզրահանգմամբ.

«Հանքարդյունաբերության պոտենցիալը դեռևս լիովին բացահայտված չէ, իսկ շրջակա միջավայրի և հետագա սերունդների հանդեպ պատասխանատու հանքարդյունաբերությունն առաջնային նպատակ է»:

2023 ԹՎԱԿԱՆԸ ԵՎՍ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԼԻՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՏԱՐԻ՝ ՄԵՐ ՀԱՄԵՐԱՇԽ ԹԻՄԻ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՆՈՐՀԻՎ

Կոմբինատը 70 տարեկան է. հասուն տարիք հանքարդյունաբերական ընկերության համար, որն առջևում բազում տարիների աշխատանքի հեռանկար ունի, այսինքն՝ հարուստ անցյալ, հուսադրող ներկա և խոստումնալից ապագա: Ընկերության պատմության մեջ առաջին անգամ հրապարակում ենք կայուն զարգացման զեկույց: Մենք սա համարում ենք կարևոր իրադարձություն, քանի որ առաջին անգամն է, որ Հայաստանի հանքարդյունաբերական խոշորագույն ձեռնարկությունը ներկայացնում է նման հաշվետվություն:



ԶՊՄԿ կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյան

Յուրաքանչյուր տարի կհրապարակվեն Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կայուն զարգացման հերթական տարեկան զեկույցները, որոնք հստակ տեղեկատվություն կպարունակեն ընկերության կողմից կատարված և կատարվելիք աշխատանքների մասին և հիմնված կլինեն մանրակրկիտ հետազոտությունների վրա: Դրանք շատ կարևոր են ընկերության աշխատանքի թափանցիկությունն ապահովելու տեսակետից, այդ տվյալների համատեղումը մեկ զեկույցում նաև հիմք կդառնա ոլորտի մասնագետների և հանրության համար՝ կոմբինատի գործունեությանը հետևելու, համեմատական ցուցանիշներով վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու համար:

Կայուն զարգացումը չի ենթադրում անփոփոխ իրավիճակ, այլ հակառակը՝ կայունություն ունենալու համար պետք է ամեն րոպե շարժվել առաջ՝ բնապահպանական, սոցիալական և անվտանգության առումներով՝ նորանոր խնդիրներ բացահայտելով ու լուծելով:

2023 թվականը ևս ձեռնարկության համար կլինի զարգացման և առաջընթացի տարի՝ մեր համերաշխ թիմի պրոֆեսիոնալ աշխատանքի շնորհիվ: Մաղթում եմ բոլորին արդյունավետ տարի, հաջողություններ՝ աշխատանքում և անձնական կյանքում:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ

Զգոն եղեք՝ ձեր և ձեր շրջապատի ապահովության համար



Կոմբինատն աշխատում է շուրջօրյա ռեժիմով: Արդյունաբերական հսկայի տարածքում շահագործվում են բազմապիսի մեծ ու փոքր մեխանիզմներ, տրանսպորտային միջոցներ և սարքավորումներ, կատարվում են հորատման, պայթեցման, շինարարական և անվտանգության տեսակետից բարձր ռիսկայնության աշխատանքներ:

ԶՊՄԿ-ն ունի ավելի քան 4,600 աշխատակից, որոնց անվտանգությունն ու առողջությունը մեր ուշադրության կենտրոնում են: Մեզ համար դրանք առաջնահերթություններ են, կարևոր է, որ այդպես մտածի յուրաքանչյուր ոք:



Մեր աշխատակիցները ոչ միայն պետք է կրեն, այլ նաև տարածեն այդ արժեքները, իսկ անվտանգության կանոնների պահպանումը դարձնելով հասարակության մտածողության ձև ու կենսակերպի մաս: Ամեն առիթով պետք է հիշեցնել տարրական կանոնները. տրանսպորտային միջոց վարելիս չմոռանալ ամրագոտին և չգերազանցել արագությունը, շինարարական աշխատանքների ժամանակ պահպանել անվտանգության կանոնները, կրել սաղավարտն ու պաշտպանիչ մյուս միջոցները, զգոն լինել շրջապատի անվտանգության նկատմամբ:



Նաև բնապահպանությունը պետք է դառնա մեր կյանքի առաջնահերթությունը, ընկերությունն իր բնապահպանական տարբեր միջոցառումներով կանխում և ձգտում է հնարավորինս նվազեցնել կոմբինատի գործունեության բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա: Դրանում մենք առաջնորդվում ենք միջազգային չափորոշիչներով, որոնց կենսագործման համար անհրաժեշտ է մեր աշխատակիցների գործուն աջակցությունը:

ԾՆՈՐՀԱՎՈՐ ԷՆԵՐԳԵՏԻԿՆԵՐԻ ՕՐԸ ՋՊՄԿ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ



Կոմբինատի գլխավոր էներգետիկ Սամվել Աղաբեկյան

Ամեն ինչ սկսվել է ավելի քան 2600 տարի առաջ. Հին Հունաստանում Ֆալես Միլեցկի անունով հույնն առաջինն էր, որ կռահել էր այն, ինչն այսօր անվանում ենք Էլեկտրականություն:

Նա նկատել էր, որ բնական սաթը (յանտար), որ հպվել էր բրդին, դեպի իրեն է ձգում ծղոտի մանր կտորներ: Ֆալեսայի լեզվով սաթը՝ էլեկտրոնն էր:Դրանից հետո տևական ժամանակ սաթի հատկություններն ոչ ոք չուսումնասիրեց, աշխարհը պետք է սպասեր ավելի քան երկու հազարամյակ, մինչ գյուտարարները հիշեն այդ մասին: Հետաքրքրական է, որ 17-րդ դարում, մարդիկ շատ ավելի շատ էին քնում, և բանն այն չէ, որ էվոլյուցիան փոխել է մեր առօրյան ու ռիթմը, այլ այն, որ մութն ընկնելուն պես ուրիշ ոչինչ չէր ստացվում անել՝ քնելուց բացի:

Ամեն ինչ փոխվեց մարդկանց կենցաղում՝ էլեկտրականության գյուտի հետ. այն հեղաշրջում կատարեց մարդկության պատմության մեջ. հնարավոր դարձավ լուսավորել բնակարաններ, առանձնատներ ու կառավարական շենքեր, հաճելի երեկո վայելել աշխատանքային երկար օրվա ավարտից հետո:

Մարդկությանը մեծագույն նվերը՝ հաստատուն հոսանքի առաջին աղբյուրը 19-րդ դարի սկզբին պարգևեց իտալացի նշանավոր ֆիզիկոս Ալեսանդրո Վոլտան: Սրանով բացվեց էլեկտրականության դարաշրջանը:

Տարվա ամենակարճ լուսային օրը՝ դեկտեմբերի 22-ին, էներգետիկները տոնում են իրենց մասնագիտական տոնը: Այդ կապակցությամբ զրուցել ենք մեր ընկերության էներգետիկական կառավարչության աշխատակիցների հետ: Կոմբինատի գլխավոր էներգետ Սամվել Աղաբեկյանը պատմում է. «ՋՊՄԿ-ն որպես ՀՀ ամենախոշոր հանքարդյունաբերող ընկերություն նաև խոշոր էներգասպառող ընկերություն է: Կոմբինատի առաջնային նպատակներից է նաև՝ էներգասպառող ընկերությունից դառնալ արտադրող. աշխատանքներ են տարվում՝ էլեկտրաէներգիա ստանալու ուղղությամբ: Կոմբինատի էներգոծառայությունը մոտ 350 աշխատակից ունի: Շուրջ 30 տարի բնագավառը ղեկավարել և զարգացման մեջ վիթխարի ավանդ է ներդրել ճանաչված էներգետիկ Էլմիր Մելիքյանը, ոլորտի երախտավորներից են նաև Լյովա Բալասանյանը, Սերյոժա Մարգարյանը, Հայկ Հակոբյանը, Էլոդիա Թադևոսյանը, Ռուբեն Պողոսյանը, Արմեն Պողոսյանը, Արարատ Իսրայելյանը, Խաչիկ Իսրայելյանը, Արամայիս Բաբայանը,երտասարդներից՝ Հայկ Սարգսյանը, Տիգրան Մարտիրոսյանը: *Այն ոլորտներից է, որի համար եղանակային պայմաններ և օրվա ժամեր չկան, անկախ ամեն ինչից, աշխատանքը զգոնություն ու բնականաբար զգուշություն է պահանջում, վթարը կամ խափանումները ոտքի են հանում ամբողջ անձնակազմին: էներգոհամակարգի մեկ րոպե անգամ խափանումը՝ կաթվածահար է անում արտադրական պրոցեսը:* Աշխատակիցները պարբերաբար անվտանգության դասընթացների են մասնակցում, երեք տարվա կտրվածքով էներգետիկայի ինստիտուտի հետ համագործակցության շրջանակներում, կազմակերպվում են քննություններ՝ ոլորտի ղեկավար անձնակազմի հետ: Իսկ տեղում մասնա-

գետներից կազմված հանձնաժողովը քննում է նրանց: Անվտանգությունը, զգուշավորությունը առաջնային խնդիր ու պահանջ են՝ էներգոհամակարգի աշխատակիցների համար: Էներգետիկների աշխատանքն ամեն օր սկսվում է տեղամասային շրջայցից, ստուգումներ, թերությունների շտկումներ և այլն: Առայժմ կարողանում ենք ապահովել նաև մասնագետների սերնդափոխությունը:

Օրվա կապակցությամբ շնորհավորում ենք մեր բոլոր գործընկերներին, մաղթում անփորձանք աշխատանքային գործունեություն, հաջողություններ»:

Կոմբինատի գլխավոր էներգետիկ Սամվել Աղաբեկյանի հետ եղանք ընկերության «Կոմբինատ» ենթակայան: Նախագծվել և աշխատանքներին ընթացք է տրվել դեռևս 2006 թվականին՝ գերմանական «Areva» ընկերության կողմից: Նախկին, մինչ այդ գործող ենթակայանն այլևս ի զորու չէր ապահովել անհրաժեշտ հզորությունը, մաշվածությունը թույլ չէր տալիս, ուստի այս նոր նախագիծը նախատեսված էր՝ աշխատանքներին նոր ընթացք ու թափ հաղորդելու համար: Ենթակայանը ի տարբերություն նախկինի, որը բաց էր և եղանակային պայմանները հաճախ վթարի առաջացման պատճառ էին դառնում, փակ էր և ժամանակակից, ամբողջովին ապահովում էր տեխնիկական առաջընթացը: Նոր ենթակայանը ամբողջովին բավարարում է կոմբինատի հզորությունները, սակայն արտադրական ծավալների հետագա աճի պահանջն է նորի կառուցումը:

ՀՀ-ում ոչ մի այլ ընկերություն 220 ԿՎտ –ի սպառող է, առաջինը մեր ընկերությունն է



Գլխավոր էներգետիկի տեղակալ Արտակ Ավետիսյան

լինելու՝ ՀՀ կառավարության, Հայաստանի օպերատոր ՓԲԸ-ի և բարձրավոլտ էլ. ցանցեր ՓԲԸ-ի օժանդակությամբ: Արդեն ընթացքի մեջ են նախագծման աշխատանքները,- ավելացնում է Սամվել Աղաբեկյանը:

Կոմբինատի գլխավոր էներգետիկի տեղակալ Արտակ Ավետիսյանը(«ԱՆանիա Շիրակացի» մեդալակիր) համեմատում է ընկերության հարստացուցիչ ֆաբրիկան կենդանի օրգանիզմի հետ, որի «արյունատար անոթները» էներգետիկական ոլորտի մասնագետներն են, իսկ շարժողական ֆունկցիան ապահովվում են մեխանիկները: Նորից կընտրեր էներգետիկի մասնագիտությունը թե ոչ, դժվարանում է պատասխանել և այժմ ժպտալով հիշում է անցկացրած անքուն գիշերները: Սակայն ընդգծում է՝ հետաքրքիր մասնագիտություն է, գիտելիքներ ու հմտություններ պահանջող:

Շնորհավորում ենք մեր գործընկերներին, ցանկանալով միմիայն հաջողություններ:

ԿՈՄԲԻՆԱՏԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՑ Է ԷՆԵՐԳԱՍՊԱՌՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԱՌՆԱԼ ԱՐՏԱԴՐՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՆ ՏԱՐՎՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ »:

ՍԱՄՎԵԼ ԱՂԱԲԵԿՅԱՆ



ՎԱՍՏԱԿԱԾԱՏ ՔԻՄԻԿԸ

Քիմիական լաբորատորիան կոմբինատի առանցքային ստորաբաժանումներից է, որն ունի մեծ ու համերաշխ, հիմնականում կանանցից կազմված կոլեկտիվ: Երիտասարդ ու փորձառու մասնագետներ, որոնք քաջ գիտակցում են իրենց աշխատանքի կարևորությունը:

Քիմիական լաբորատորիան ավելի երկար պատմություն ունի, ավելի երկար, քան անգամ կոմբինատը, քանի որ դեռ այն ժամանակ, երբ խորհրդային երկրաբաններն ուսումնասիրում էին Գանձասարի ընդերքը, լաբորատորիան անհրաժեշտ էր՝ հետազոտություններ կատարելու և ի վերջո հասկանալու՝ ի՞նչ կա լեռան խորքում, որքանով է դրա շահագործումը տնտեսապես նպատակահարմար:

Ներկայումս լաբորատորիան գրեթե 120 աշխատակից ունի. լաբորանտներ, ինժեներներ, սպիտակ արտահագուստով ժրաջանորեն աշխատող մարդիկ: 2016 թվականից ստորաբաժանման ղեկավարն է Արման Ոսկանյանը՝ Ոսկանյանների համբավաշատ աշխատավորական գերդաստանի երիտասարդ ներկայացուցիչը:



Քիմիական լաբորատորիան կոմբինատի արտադրամասերի աշխատանքի հայելային արտացոլումն է:



Լաբորատորիայի ղեկավարի տեղակալ Նելլի Դավթյան

- Ունենք միջազգային չափանիշներին համապատասխանող ժամանակակից սարքավորումներ՝ լաբորատորիան տեխնիկապես հագեցած է: Ձեռք են բերվել ինդուկցիոն պլազմային անալիզատոր, որը մոտավորապես 50 էլեմենտի անալիզ է կատարում, ռենտգենոսկոպի անալիզատոր, որը կրճատում է աշխատաժամանակը: Հարկ է նշել, որ մասնագիտական թիմի ձեռքբերումների շնորհիվ աշխատանքի արդյունքները ճշգրիտ են:

Քիմիական կամ անալիտիկ լաբորատորիան որոշում է նմուշներում, նաև պոչերում առկա մետաղի կամ տարրի պարունակությունը:

Եվ ամենակարևորը՝ լաբորատորիայի հաստատված ցուցանիշները հաստատվում են նաև վաճառքի ժամանակ՝ միջազգային լաբորատորիաների կողմից կատարվող անալիզների արդյունքում: Իսկ սա շատ կարևոր է:

- Քիմիական լաբորատորիայի կայացման ակունքներում կանգնած է բնագավառի երախտավոր Գրենիկ Փարամազյանը, ով կառույցը ղեկավարել է 22 տարի, և եղել նաև իմ ուսուցիչը:



Լաբորատորիայի ղեկավար
Արման Ոսկանյան

1992 թվականից նրան հաջորդեց Ռիմա Սարգսյանը:

Լաբորատորիայի պատմության մեջ մեծ է նրանց՝ երկու մասնագետ-ղեկավարների դերը: Տասնյակ տարիներ նրանք ոչ միայն ապահովել են անդադար ու ճշգրիտ աշխատանք, այլ՝ ստեղծել գործող համակարգ:

- 2016 թվականից շուրջ վեց տարի, - պատմում է լաբորատորիայի ղեկավար՝ Արման Ոսկանյանը, - աշխատեցինք լաբորատորիայի ղեկավարի տեղակալ Նելլի Դավթյանի հետ: Միշտ հիացրել է իր պատասխանատվությամբ, մասնագիտական հմտություններով, մարդկային որակներով: Առողջություն, երկար տարիների կյանք, անսպառ եռանդ և էներգիա եմ մաղթում նրան: Տրամադրություն ստեղծող ղեկավար աշխատակից էր, ումից սովորելու շատ բան ունեն բոլորը:

Լաբորատորիայի, ղեկավարի տեղակալ վաստակաշատ աշխատակցուհի Նելլի Դավթյանն ասում է.

- Իմ և մյուսների աշխատանքը շարունակող սերունդ կա, այսօր ունենք մասնագետներ, ովքեր չնայած երիտասարդ տարիքին՝ կայացած են և իրենց գործի գիտակ: Եվ հավատացած եմ, նրանք առանց մեզ էլ գործը անթերի են կատարելու:

Լաբորատորիան լավագույն ավանդույթների և հիանալի մասնագետների մի ամբողջություն է, որը միշտ էլ ղեկավարել են բանիմաց մարդիկ, բարձրակարգ պրոֆեսիոնալներ և դա շարունակվում է:: Փորձառու աշխատակիցներից, իմ գործընկերներից կարող եմ նշել. Գայանե Սարգսյանին, Դորետա Աթայանին, Սոնիկ Գրիգորյանին, Ելենա Ներսիսյանին, երիտասարդ ինժեներ՝ Գոհար Մարգարյանին և այլն: Աշխատակիցներից մեկը հուզվեց՝ նկատելով կենսաթոշակի անցնելու մասին ծանուցագիրս: Դա մեծ գնահատական էր՝ սեր ու հարգանք պարունակող:

Հեղինակավոր մասնագետը այնքան բավականությամբ էր պատմում աշխատանքի մասին, որ մի պահ թվում էր դժվարություններ կարիերայում հավանաբար չի ունեցել: Նա ընդամենը դրանք հաղթահարել է, ժպտացել և առաջ նայել. կարողացել է կայանալ և սովորեցնելով սովորել, լաբորատորիան համարելով հարազատ տուն:



Մեկն եմ, ում հաջողվել է աշխատել Գրենիկ Փարամազյանի ղեկավարությամբ: Նրա վերաբերմունքը նորեկների նկատմամբ ինձ համար հիմքային դարձավ, հարկավոր է երիտասարդներին հնարավորություն տալ, մատնանշել ճանապարհը և վստահ եմ՝ նրանք կկայանան:

Երիտասարդները ներկայումս համարձակ են, ավելի շատ տեղեկատվության աղբյուրներ ունեն, ուժեղ են և կարող. տվեք նրանց հնարավորություն, սեր և ցանկություն սերմանեք գործի նկատմամբ:

Նելլի Դավթյան

«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀԻ ՀՐԱՇԱԼԻՔՆԵՐԸ»

ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Քաջարանի լեռնագործների մշակույթի պալատում կայացավ ՀՀ ժողովրդական նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդես՝ «Սյունյաց աշխարհի հրաշալիքները» խորագրով և կազմակերպվել էր կոմբինատի 70-ամյակի միջոցառումների շրջանակում: Թեման՝ Սյունիքն էր, իր բնաշխարհով ու պատմամշակութային օջախներով:



Ցուցահանդեսին մասնակցում էր 14 նկարիչ. Հրանտ Թադևոսյանը, Անատոլի Ավետյանը, Արմեն Սողոմանյանը, Արմեն Հարությունյանը, Լևոն Խաչատրյանը, Ժիրայր Մարտիրոսյանը, Հայկ Գևորգյանը, Արամ Մանշուրյանը, Սուրեն Սաֆարյանը՝ արվեստասեր հասարակության դատին ներկայացնելով շուրջ 50 կտավ:

«Բնանկարիչները փորձում են իրենց նկարներով սիրել հայրենիքը, ցույց տալ նրա գեղեցկությունն ու անկրկնելիությունը»:

Արմեն Հարությունյան, գեղանկարիչ, ՀՀ նկարիչների միության անդամ, մանկավարժական գիտությունների թեկնածու





«Մենք հաճույքով եկանք Սյունիք, այն հրաշալի բնաշխարհ ունի և, ճիշտ է, որ միջոցառումը կազմակերպվեց հենց այստեղ: Հեռանում ենք վառ տպավորություններով»:

Լևոն Խաչատրյան, Հրազդանի մանկական արվեստի դպրոցի դասատու, բնանկարիչ



«Շնորհակալ ենք Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին այս հնարավորության՝ դպրոցի երեխաների մասնակցությունը ցուցահանդեսին ապահովելու համար: Դա մի մեծ փորձառություն էր, հատկապես օգտակար էին հայտնի գեղանկարիչների վարպետաց դասը»:

Մարինա Նահապետյան, Կապանի արվեստի մանկական դպրոցի տնօրեն

ՄԻԱՎՈՐՎԵԼ ԵՆ՝ ՀԱՆՈՒՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ



Կապանում գործող քիք-բոքսինգի «Գարեգին Նժդեհ» և «Զանգեզուր» մարզակումբներն օրերս միավորվեցին: Ստեղծվեց Սյունիքի մարզի սիրողական և պրոֆեսիոնալ քիք-բոքսինգի մարզական ակումբը՝ նախագահ, ՀՀ վաստակավոր մարզիչ՝ Արայիկ Սարգսյան, պատվավոր նախագահ, ընկերության կայուն զարգացման գծով տնօրեն՝ Արմեն Ստեփանյան: Նորաստեղծ մարզակումբի սաներն ու մարզիչները մարզական հաջողություններով են եզրափակում 2022 թվականը: Մրցաշարերով և մրցանակներով առատ տարի էր, մարզվել ցանկացող սաների թիվն էլ օրեցօր ավելանում է: Մարզաձևը օգնում է նաև երեխաներին կտրվել փողոցից, վարել առողջ ապրելակերպ:

- Պարբերաբար մասնակցում ենք ՀՀ-ում կազմակերպվող մրցաշարերի: Մարզիկների ցուցանիշը գոհացուցիչ է: Կոմբինատի հովանավորությամբ մասնակցել ենք նաև 2022 թվականի աշխարհի առաջնությանը: Ճիշտ է, այնտեղից վերադարձանք միայն բրոնզե մեդալով, սակայն, կարծում եմ, որ կարող էինք ավելին: Ավելի հաճախակի մասնակցելով միջազգային մրցաշարերին՝ անպայման կունենանք ցանկալի արդյունքը, - ասում է Արայիկ Սարգսյանը:

ՀՀ քիք-բոքսինգի ֆեդերացիայի փոխնախագահ, մարզիչ Վիկտոր Խաչատրյանը համոզված է, որ ակումբների միավորումը արդյունավետ կլինի և կնպաստի մարզաձևի զարգացմանը, ընդգրկված երեխաների թվի ավելացմանը: Այս պահին արդեն ունեն մոտ 70 երեխա:





Ակումբի պատվավոր նախագահ՝ Արմեն Ստեփանյան.

- Մարզական ավանդույթները հաջողությամբ շարունակվում են, և սպորտին մենք մեծ ուշադրություն ենք դարձնում: Քիք-բոքսինգը Կապանում կայացել է, և դա տարիների ընթացքում կատարված աշխատանքի վկայությունն է: Վերջին ձեռքբերումները ոգեշնչող են: Ակումբների միավորումը ճիշտ որոշում էր, մեկ միասնական թիմով ավելի մեծ հաջողությունների կհասնենք:



Հիմնադիր և հրատարակիչ՝ «ՉԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Լեռնագործների 18
Էլ. հասցե՝ matenashar@zcmc.am